ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մանկավարժական աշխատողների (մասնագետների) թափուր տեղի համար մրցույթ՝ «Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն» և «Ապրանքագիտություն» մասնագիտություններում «Մասնագիտական», «Ուսումնական պրակտիկա՝ տեսական ուսուցմամբ», «Ուսումնական պրակտիկա՝ առանց տեսական ուսուցման» պրակտիկաներ անցկացնելու համար.

Վերոնշյալ թափուր տեղի մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է «Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն» և «Ապրանքագիտություն» մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է ներքոնշյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1),

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձև 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

9) Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերը ընդունվում են 09.04.2025թ-ից 22.04.2025թ. ժամը 18:00 ներառյալ:
Մրցույթը կկայանա 2025 թ. ապրիլի 28-ին, ժամը 15:00-ին՝ Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջում: Հասցեն՝ ք. Արմավիր, Երևանյան 36:
Տեղեկությունների համար զանգահարել՝ 093-30-01-63 հեռախոսահամարով:

Էլեկտրոնային հասցե՝ armavir-75@mail.ru